



Թ. ՏԱՐԻ ԹԻԻ 37

— ՏՈՒՐԱԹ —

10 ՍԵՊՏԵՄԲԵՐ 1905

Կ. ՊՈԼՍՈՑ ՀԱՄԱՐ	ԳԱՒԱՌԱՑ ՀԱՄԱՐ	ԱՐՏԱՍԱՀԱՐԱՆԻ
Տարեկան 50 Ղր.	Տարեկան 54 Ղր.	Տարեկան 12 Ֆր.
Վեցամսեայ 25 »	Վեցամսեայ 27 »	Վեցամսեայ 6 »

ԳԱՌՆԻԿ ՍԱՐԳԻՍՕՅ ԵՒ ԸՆԿ

ՍԵՐ ԳԱԺԱՌԱՅՈՒՆ

ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԺԱՄԱՑՈՅՆԵՐՈՒ, ՇՂԹԱՅՆԵՐՈՒ ԵՒ ԳՈՀԱՐԵՂԻՆԱՑ

Կ. Պոլիս, Ճեղաղ Պեյ խանին սալ, Թիւ 16

Մասնաւորապէս կը խնդրուի ուշադրութիւն ընել ՍԱՐԳԻՍՕՅ անունը կեղծող կարգ մը նորեղակ ժամացոյցներուն որոնք հրապարակի վրայ կը տրջին:

ՍԱՐԳԻՍՕՅ ժամացոյցները ջերմապէս կը յանձնարարուին ինչպէս նաեւ ԶԵՆԻԹՐ՝ քե՛
Կ. Պոլիս, եւ քե՛ Գաւառները, ուրկէ եղած յանձնարարութիւնք անմիջապէս կը կատարուին գոնացուցիչ պայմաններով:

Ծանօթ. — ԶԵՆԻԹ ժամացոյցները Բարեկի 1900 Արուեստահանդէսին մէջ ամենեւնի բարձր պարգեւին արժանացած են:

Հասր 40 փաւա

ԱՐՏՈՆԱՏԷՐ — ԱՐՄԷՆ ԼՈՒՍԻՆԵԱՆ

(ڪٽبخانه جهان) مطبعه مى — باب على جاده مى ۲۳

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ — ՃԻՀԱՆ ԳՐԱՏԱՆ

Կ. Պոլիս Պապը-Ալի ճաշքսի քիւ 23



BOVININE

ՊՕՎԻՆԻՆ

ԱՄԵՐԻԿԵԱՆ ԸՆՏԻՐ ՍԵՈՒՆԴ

ՓՈՐՐ ՏՂԱՅՈՑ

ՊԱՏԱՆԻՆԵՐՈՒ

ԵՒ ԾԵՐԵՐՈՒ

Bovinineը կը պարունակէ զուտ սննդային մասերն եզան մսին, ուղեղին, ողնաղեղին և ֆոսֆաթներն ոսկրային կազմուածքին, խտացեալ վիճակի մէջ:

Պոյիս նոր բերուած այս անղուգական կազդուրիչ դեղը, 27 տարիներէ ի վեր ծանօթ և դնոհատուած ընդհանուր Ամերիկայի, Անգղիոյ, Ճաբոնի և Չինոս համալսարաններէն. Վերմայէս կը յանձնարարուի ամէն անոնց՝ որոնք կ'ըզան ուժասպաւորութիւն, դակտորիւն, անախորժութիւն, ստամոքսի խանգարում, ընդհանուր հոգեկան տագնապ, նիւրստութիւն, կոնստիպացիոն, անարիւնութիւն և ընդհանուր թուլութիւն:

Անգամ մը դարձած ուժիւնը կը հաստատէ իւր անղուգական յատկութիւնը: Ընկերութեան միակ ներկայացուցիչը ԱՐԴԱՐԵԱՆ ԵՂԲԱՐԲ, Պահճէ-գարու, Օսմանեան նամակատան ետեւի կողմը: Կը գտնուի նաև ամէն նշանաւոր դեղարաններու և դեղորէից միջերանոցներու քով:

50-7



ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ԶԱԲԱԹԱԹԵՐԹ

ՏՆՕՐԷՆ-ԽՄԲԱԳԻՐ ՎԱՅԱՆ ՓԱՓԱԶԵԱՆ

Թ. ՏԱՐԻ Թ/Խ 37

ՇԱԲԱԹ

10 Սեպտեմբեր 1905

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Մահ Գրիգոր Էֆենտի Դարակեղեանի: Միմոսի օրագիրը (իմ ճամբորդութիւնս).
ԵՐ. ԹՕԼԱՑԵԱՆ: Պատասխան մը. — ԵՂՈՒԱՐԻ ԳՕԼԱՆՃԵԱՆ: Պահեր (Ոսանաւոր).
— Օ. ՃԵՆԱԶԵԱՆ: Արուեստասերի մը յուշերը. — ԱՇՈՏ ՄԱՏԱԹԵԱՆՑ: Թափառում-
ներ (Մառտին պարսկեր). — Վ. ՓԱՓԱԶԵԱՆ: Ապառա (Ոսանաւոր). ՍՏԵՓԱՆ ԽԱ-
ԶՈՒՆԻ: Կապիկերու աշխարհին մէջ (Հանգրգիսակի բերթօնը). — ԼՈՒԻ ԺԱՔՕԼԻՍ:

Մ Ա Հ

ԳՐԻԳՈՐ ԷՖԵՆՏԻ ԳԱՐԱԿԵՕԶԵԱՆԻ

Յաւր որ խմբագրութիւնս կը պարուրէ, կարի տխուր է, թէ՛ Հայ մա-
մուլին և թէ՛ նոյն իսկ մեր հանրութեան համար է: Մահեր կան, կեանքեր որոնք
« և է հետք չեն թողուր իրենց անցած գացած միջոցին, բայց այս մահը անոնց-
մէ է որոնց վրայ ընդերկար կը խորհրդածէ մարդ, խրատներ կ'առնէ անցեա-
լէն՝ այն այլեւս դադրած կեանքէն, բարի խորհուրդներ կը քաղէ անկէ ապագա-
յին համար: Արդարեւ կորուստը մեծ է և իր մեծութեանը չափ ալ խորունկ իր
առթած ցաւը: Դարակեղեան էֆենտիի այս տխրաւիթ մահուան առթիւ կ'արժէ
կենալ պահ մը և անդրադառնալ այն իրադարձութեանց զոր կեանքը կը պար-
զէ ամէն օր մեր առջիկ:

Ինքնօգնութեան, մեր երիտասարդութեան ուղղուելիք ամէնէն մեծ ու
կարկառուն դասը կայ այս բեղմնաւոր կեանքին մէջ որ աշխատութեան, գործի,

բարի, պատուաւոր ընտանեաց պետ տիպար նահապետի մը կենցաղը եղաւ : Հանգուցեալը շատ դրամով մը չէր որ գործի առաքարէզին մէջ նետուեցաւ, իր նախապէս ունեցածը չստեր մէկ տարուան մէջ լմնցուցած ու փճացուցած են մեր մէջ : Եւ արդարեւ ի՞նչ էր հիմակուան ունեցած գովելի դիրքին քով 1500 ոսկիի չնչին գումարը, կաթիլ մը ջուր ամբողջ խոշոր գաւաթէ մը միայն : Բայց խելացի ու շրջահայեաց մատակարարութիւնը որով կառավարեց հանգուցեալը իր գործերը եւ որոնք դրին զինք Պսլտոյ սեղանաւորութեան առաջին դասին ընտրեալներուն մէջ, արժանի ըրաւ զինք այն մեծ համբաւին ու վարկին զոր կը վայելէր թէ մայրաքաղաքիս եւ թէ՛ Եւրոպական հրապարակին վրայ : Իրա՛ւ թերեւս թերութիւններ ունեցաւ ինք, եւ արդէն ո՞ր մարդն է որ թերութիւն ունեցած չըլլայ երբէք, բայց իր կեանքը իր մեծ գործերուն մէջ առաքինութեան տիպար մը եղաւ, որմէ պէտք է մեծ դասեր առնէ մեր հայ երիտասարդութիւնը, մեր գործի սկսող ամէն հայ անհատները : Ու այսօր շատ իրաւամբ է որ մեր համայնքը իր անունով կը պանծայ Գրիգոր Էֆէնտի պարծանքը եղաւ Գարակէօղեան գերդաստանին, եւ Գարակէօղեան գերդաստանն ալ փոխադարձ պարծանքն իրեն : Իր եղբորորդիներն ու քեռորդիները, որոնք պատուաւոր ու առաջնակարգ տեղ մը կը դրաւն այսօր հայ վաճառականութեան դասուն մէջ, եւ որոնք լիովին ժառանգած են հանգուցեալին ընտիր ընտիր բարեմասնութիւնները առեւտրական կեանքին մէջ յաջողելու ու յառաջանալու, որոնք իրենց վրայ կը կրեն այն ազնիւ առաքինութիւնները, որ յատկանիշն էին այս այլեւս ապրելէ դադարած կեանքին, չէին սպասեր այս մահուան զանազան նկատումներով, բնա՛ւ իրենց համար դեռ շատ պէտք էր ան, եւ իր շուքը մեծագոյն սատարն էր ու քաջալերիչը կեանքի մէջ յարուցուած դժուարութեանց հանդէպ : Հանգուցեալը արդէն, իր կենաց օրերուն եւ իր հիւանդութեան մէջ իսկ բարի խրատատուն ու ռահվիրան էր իր սիրական քեռորդիներուն ու եղբորորդիներուն : Ու այսօր, խմբագրութիւնս լիովին կ'ըմբռնէ այն ցաւը զոր ունեցան այս բեղմնաւոր կեանքին իրենց մէջէն անդարձ հեռացումով :

Գալով մեր համայնքին, արդարեւ մեծագոյն կորուստներէն մէկն է որ կ'ունենայ յանձին ողբացեալին, եւ իրեն պատուաբեր զաւակներէն մէկուն մահուամբ կը հեռանայ իր պարծանքը կազմող գոյութիւններէն մէկն ալ :

Գերդաստանին նահապետը՝ հանգուցեալ Գրիգոր Էֆ. Գարակէօղեանն ոչ միայն տիպար անձնաւորութիւն մ'էր իբր բարոյականի տէր, այլ նաեւ « գործի մարդ » էր : Ի տղայ տիպ իր առեւտրական գործունէութիւնն եւ անոր մէջ իր անմրձելի յառաջգիմութիւնը բացարձակ հաստատողականն է իր գործի մարդու ընդոծին յատկութեան եւ սկզբունքին : Շատեր կրնան ոսկիներ դիզել իրենց ձեռնարկած առաքարէզին մէջ, սակայն Գրիգոր Էֆէնտի Գարակէօղեանի չափ խոհուն եւ տնտեսադէտ՝ շատ սուղ կը ծնին մեր մայրերը : Խնդիրը հարըստութեան եւ դրամի առաւելութեան վրայ չի կայանար : այլ այդ հարստութիւնը, ի բարին եւ օգտակարին համար գործածելուն մէջ : Այս մահուան առթիւ բոլոր

լրագրութիւնը իր էջերը բացաւ ու գովասանական արդար սխալներ չի գրայ-
ուեցան իր յիշատակին սու միակ պատճառաւ թէ ինք՝ Գրիգոր Էֆէնտի Գարա-
կէօլեան պարզ գէտք մը չէր մեր համայնքին մէջ իբր տիպար անձնաւորու-
թիւն, իբր բարեպաշտ քրիստոնեայ և մանաւանդ, իբր «գործի մարդ» :

Արտայայտուած ցաւի այս տխուր զգացումներուն մէջ, ա՛լ բան մը չ'մնար
մեզ ըսելիք, այլ երկնային մխիթարութիւն հայցել իր աղնուազարմ՝ ազգական-
ներուն իրենց ունեցած դառն կորուստին համար, և յաջողութիւն ու կարողու-
թիւն մաղթել այն գեղեցիկ ասպարէզին և գործին շարունակութեանը համար
չոր կը թողու հանգուցեալ :

ՅՈՒՂԱՐԿԱԻ ՈՐՈՒԹԻՒՆ

Կիրակի 4 Սեպտ. Բերա Ս. Երրորդութիւն եկեղեցին մէջ կատարուեցաւ
յուզարկաւորութիւնը՝

ԳՐԻԳՈՐ ԷՓԷՆՏԻ ԳԱՐԱԿԵՕԶԵԱՆԻ

Նախագահութեամբ Ամենապատիւ Ս. Պատրիարք Հօր, շուրջը ունենալով
Տ. Տ. Բարթողիմէոս Չամչեան, Հմայեակ Դիմաքսեան, Գրիգորիս Յովհաննէս-
եան, Դէորդ Երէցեան և Արիստակէս Վանքեան Սրբազանները, ինչպէս նաև
վեց վարդապետներ, քսան քահանաներ, դպիրներ և երգեցիկ մանուկներու
ստուար թիւ մը :

Եկեղեցական տրարողութիւններէ վերջ, նմանը շատ քիչ անդամ տեսնուած
հանդիսաւորութեամբ թափօր կազմուելով՝ դադարը առաջնորդուեցաւ եկե-
ղեցւոյ բակը, ուր «Հոգւոց» լարդացուեցաւ նոյն եկեղեցական պատկառելի
դասուն ներկայութեանը :

Դադարին կերոնները և ծոպերը կը կրէին Համայնքին էն զատուած անձ-
նաւորութիւնները, և որուն առջեւէն յատուկ պաշտօնեայ մը կը կրէր հանգու-
ցելոյն Ա. կարգի Մէճիտիէ և Գ. կարգի Օսմանիէ պատուանշանները, թաւիչէ
բարձիկի մը վրայ :

Յաւարտ եկեղեցական տխուր արարողութեան, դադարը դրուելով քա-
ռածի առաջնակարգ մեռելակառքի մը մէջ, որուն կը հետեւէին հարիւրէ ա-
ւելի կառքեր յուզարկաւորներու յատուկ, ուղղուեցաւ Շիշլիի Ազգ. գերեզմա-
նատունը, ուր մարմինը ամփոփուեցաւ իր ընտանեկան դամբարանին մէջ :

«Հանգազիսակ» իր խորին ցաւակցութիւնը կը յայտնէ Գարակէօլեանց
Նահապետին այս դառնակիւծ մահուան առթիւ՝ Թողւոր, Եղուարդ, Արամ,
Արշակ, Միհրան, Սարգիս Գարակէօլեան Էֆէնտիներու, ինչպէս նաև Էսաեան,
Փնտղեան, Տօքթ. Դաւիթեան, Պապեան Էֆէնտիներու և բոլոր Գարակէօլ-
եան գերդաստանին պարագաներուն :



ՆՐՈՒԱՆՆԻ ԹՕԼԱՅԵԱՆ

Մեր ծանօթ երգիծաբանը՝ Նրուանդ Թօլայեան, որ իր Մէտի Օրփէիովը մեր ամենէն ժողովրդական դեմքերէն մէկն է եղած, եւ որուն գրուածները ամեն կարգի ընթերցողի կողմէ հաւասար հանդիման եւ գոհունակ երկնքներով կը կարդացուին, այս անգամ իր աշխատակցութիւնը կը վերսկսի մեր թերթին մէջ, իր ճամբարական զանեցալից սպաւորութիւններով, զորս գրած եւ Սամսոն գտնուած միջոցին:

Հանդիման կը հրահարակեմք մեր երիտասարդ երգիծաբանին յօդուածը, որ ծայրէ ի ծայր զուարթ երկնքներու շարք մըն է, ինչպէս միշտ:

ՄԻՄՈՍԻ ՕՐԱԳԻՐԸ

ԻՄ ՃԱՄԲԱՐԴՈՒԹԻՒՆՍ

Ա.

Այս տողերը գրող Բերային, ձեր ամէն նուն գիտցած սիրելի պարոնը, որ Բերան կը պաշտէր խոնարհաբար, հիմա Սամսոնի եղաւ:

Այո՛, պարոններ, թէ և առժամապէս, ոսկայն վերջապէս հիմա հիմնովին Սամսոնի եմ, Սամսոնի մը՝ առանց կատակի, քանի որ տաանըհինգ օրէ ի վեր Սամսոնի օդը շնչելու պատիւը կը վայելեմ:

Պատուհանիս առջեւ նստած, ծովուն ու երկինքին զոյգ մը կապոյտները քննելով և գաւառացի կնիկներու անցուղարձը դիտելով, գաւառական կեանքի ամբողջ անուշութիւնները կ'ըմբռնեմ:

Գաւառական կեանքի ասպրելու կերպին վարժուելու համար, իրիկունները ժամը տասնըմէկին ճաշ կ'ընեմ և ժամը մէկին անկողին կը մտնեմ և անկողին մէջ մինչև ժամը ութը կը դառնամ: Յորեկները. — Յորեկներն ալ սեպտեմբեր անկունը տիտիկ կ'ընեմ:

Առտունէ մինչև իրիկուն, ծովուն վրայ շատ մը շոգենաւներ ունեցող շոգենաւտիւրով մը պէս ամէն վայրկեան շոգենաւտի մը կը սպասեմ, Պոլսէն նամակ կամ թերթ ըստանալու համար. Ռուս և Զաքոնական պատերազմին իրադարձութիւններովը ա'լ չափազանց կը հետաքրքրուիմ: Թօկոն ինչ եղաւ, Բուրժուաքին ո՛ր տեղուանքն է, ասոնք են իմ գլխաւոր մտադրադումներս, խահուէին գինը, գոնսօլիտին ելեւէջը, ցորենի ու գարիի հրապարակը, ահա՛ իմ զբաղումներուս այժման ու օմեկան:

Թերթ մը ձեռք անցնելուս պէս, մէջը անմէն բան կը կարդամ, յօդուած կամ քերդուած, առա'նց բացառութեան, չորրորդ երեսի ծանուցումները բերանացի դիտեմ, և կամ գրողներու խմբագրական յօդուածները առաջին տողէն մինչև վերջինը կ'ընամ գոց արտասանել:

Գաւառը Բերայի պէս չէ, հոն զուարճութիւնները, ժամանցները կը վիտան և մարդ չի խորհիր թէ ինտո՛ր պիտի անցընէ:

իր ժամանակը, սակայն, հոս գաւառին մէջ ատանկ չէ, մանաւանդ օտարականի համար: Հոս, ժամանցները սահմանափակ են և մարդ զբօսնելու համար պարտաւոր է ինքզինքին յատուկ զուարճութիւններ ըստեղծել:

X

— Ճամբու նօթերնիդ չգրէ՞ք, ըսաւ մէկը իմ սիրելի բարեկամներէս:

— A la bonne heure! բացագանչեցի, ինչո՞ւ չէ:

Ճամբու նօթերս հապա, և խնդրեմ ինչո՞ւ չէ:

Մեր մէջ ամէն անհատ, որ իր անունը գրել գիտէ, անպատճառ իր ճամբուն նօթերն ալ գրած է, և այսօր զօյալը չապիկ չգնելը, կօշիկ չհագնելը կամ գուլպայ չգործածելը ա՛յնչափ ամօթ չէ, որչափ . . . իր ճամբու նօթերը չգրելը:

Մեր գրական աշխարհում — աշխարհ մը, որ հակառակ մեր երկրային աշխարհին կոտորած ԸԼԼալուն, բոլորովին . . . տափալածու է, — ճամբու նօթերը գրելու «սովորամոլական դրութեանկանութիւնը» ա՛յնչափ առաջ դացած է որ, եթէ օրին մէկը մինչև Պէոյիւքտէրէ երթայ, ա՛լ քանի մը տարի շարունակ մտիկ ընելու է իր ուղեւորական տպաւորութիւնները:

Պոլիսէն Իզմիր ճամբորդողը իր ճամբու նօթերը կը թխէ և կիրակի օր մը Ենի-գաբուէն մինչև Մագրի-գիւղ դացողը կրնայ մոռնալ դերձակին պարտքը վճարել, բայց չի՛ մոռնար երբէք իր ուղեւորական տպաւորութիւնները նօթագրել:

Եւ քանի որ ես ալ ամէն մեղքերուս վրայ գրող կարգացող մըն եմ, անշուշտ կը ներէք որ ես ալ նօթագրեմ իմ ճամբու նօթերս, որոնցմէ բարոյականի դասեր հանելը ձեզի կը թողու՞մ:

X

— Միւսիւ Երուանդ, միւսիւ Երուանդ, կը պօռայ անծանօթ ձայն մը ետեւէս:

Եթէ ասիկա Մօնթէքէնի վէպէրէն մէկուն մէջ պատահեր, ապահովաբար սարսափահար ետիս պիտի դառնայի, սակայն, բարեբաղդաբար տեսարանը կ'անցնի ո՛չ թէ Մօնթէքէնի վէպերուն մէջ այլ Սամսոն:

— Միւսիւ Երուանդ, միւսիւ Երուանդ, կը կրկնէ ձայնը:

Պէտք է գիտնալ թէ մեր համայնքին մէջ երկու Երուանդ կայ, մէյ մը՝ Երուանդ Տէր-Անդրէասեանը, մէյ մըն ալ՝ ձեր խոնարհ ծառան:

Եւ որովհետեւ Տէր-Անդրէասեանը սա միջոցին ճամբորդութեան մէջ չի գտնուիր, այլ «Մանգուսէ» ի պատուարժան խմբագրատունը, ուրեմն ետիս կը դառնամ:

— Բարեւ, կ'ըսէ անծանօթ ձայնին տէր և տնօրէնը, անանկ մտերմական շեշտով մը, որ կարծես զիս յիսո՛ւն տարիէ ի վեր կը ճանչնայ:

— Բարեւ, կը պատասխանեմ զարմացական շեշտով մը, որովհետեւ, չիտա՛կը, յիսուն տարիէ ի վեր չեմ ճանչնար զայն, սա մինակ պատճառով որ դեռ . . . քսան երկու տարեկան չեմ (վաւերական):

— Ի՞նչպէս էք:

— Աղէ՛կ եմ, կը պատասխանեմ, որովհետեւ սոխորութիւն է՝ ամէն «Ի՞նչպէս էք»ի, «աղէկ եմ»ով պատասխանել, հոգ չէ թէ չա՛տ գէշ հիւանդ ԸԼԼաւ:

— Զիս չճանչցա՞ք, կը բացագանչէ մարդը:

— Ճանչցա՛յ, ճանչցա՛յ . . . բայց աղէկ մը չկրցայ ճանչնալ, կը մուտամ՝ խորհելով թէ այս դէմքը ո՞ւր տեսած կրնամ ԸԼԼալ:

— Բայց, դուք Պոլսեցի չէ՞ք:

— Այո՛, Պոլսեցի եմ:

— Այո՛, այո՛, միտքս կուգայ կոր . . . կը պատասխանեմ՝ թէ և միտքս ոչի՛նչ կուգայ:

— Դուք Բերա կը բնակիք, այսպէս չէ՞, վրայ կուտայ մարդը:

— Այո՛, Բերա կը բնակիմ:

— Ես ալ Բերա կը բնակիմ. — Հիմա զիս յիշեցի՞ք:

— Այո՛, այո՛, յիշեցի . . . Կեցէք ձեր անո՛ւնը:

— Յակո՛բ:

— Այո՛, այո՛, Յակոբ, սիրելի՛ Յակոբ, մականուննի՞դ, կեցէ՛ք, ան ալ պիտի յիշեմ, իրաւ ի՛նչ էր մականուննիդ . . .

— Մէլիտոնեան:

— Այո՛, այո՛, յիշեցի՛, յիշեցի՛, Յակոբ

Մէլիտոնեան . — Ի՞նչպէս էք , աղէկ էք ,
ո՛վ սիրելի բարեկամս Յակոբ Մէլիտոնեան :

(Ու խաւկցութիւնը կը շարունակուի)

ԲԱՐՈՅԱԿԱՆ . — Ու կամայ ակամայ սի-
րելի բարեկամ դարձանք այս մարդուն հետ,
որ կը պահանջէր ինէ անպատճառ զինք
ճանչնալ , որովհետեւ , ես ալ Բերացի էի ,
ա՛ն ալ Բերացի էր , ես ալ Պոլսեցի էի ,
ա՛ն ալ Պոլսեցի էր :

Բ.

Պոլիսէն դէպ ի Սամսոն , եթէ ձեր խո-
նար ծառային տեղ՝ լուսանդի տիար Հո-
մերոսը կամ հոգեւոյս պարոն Վիրգիլիոսը
եղած ըլլար , գրաւ կը դնեմ որ մէկը Իլի-
ական մը պիտի յօրինէր ու միւսը Ենէական
մը պիտի թիւնէր , Ողիմպոսէն վար իջեցնե-
լով բոլոր միջնորդներն չաստուածները և
Պաւստոսէն վար գլխորդելով բոլոր համեստա-
փայլ մուսաները :

Սակայն , փառք տուէք որ ես ո՛չ տիար
Հոմերոն եմ և ո՛չ պարոն Վիրգիլը , այլ պար-
զապէս ու միմիայն ձեր խոնարս ծառան ,
որով Ողիմպոսին չաստուածները կրնան՝
չաստուածուհիներու անուշ Ենէականներովը մը-
րափել տիկնայք մուսաները կրնան մշի՛կ
մշի՛կ քնանալ , որովհետեւ ես զանոնք ան-
հանգիստ ընելու չափ անքաղաքավար մէկը
չեմ :

(Փառաթ մը ջուր ուզելու համար կըր-
նամ քառսունըութը ժամ արթուն մնացած
սպասաւորս արթնցնել , բայց յօդուած մը
գրելու համար նազելի տիկին մուսաները
արթնցնել , օ՛հ , չէ՛ , քաւ լիցի , ասիկա
չեմ ընդունիր) :

— Ճամբորդութիւն , ա՛հ , ի՛նչ անուշ ,
բանաստեղծական բան , պիտի բացագանչեն
թերեւս բոլոր անոնք , որոնք , իրենց ամ-
բողջ կեանքին մէջ , իբրեւ մեծագոյն ճամ-
բորդութիւն՝ տարուան տասներկու ամիսը
կառարար շոգեհաւով Սիրէճիկէն մինչեւ
Սկիւտար գացած են և կամ ամառը՝ մինչեւ
Պէօլիւքէն ճամբորդած են , բան մը որ
դուցէ աշխարհիս չըջանը ըրած ըլլալու չափ
ազգած է իրենց :

Օ՛ , ի՛նչ հաճոյք՝ ամբողջ գիշերներ ան-
ծանօթ ծովերու անսահմանութիւններուն վը-
րայ թափառիլ , մինչ լուսինը՝ իր գեղանոյշ

տոգոյն աղջիկի ոսկեղօծ ու փալիւռն մա-
զերը ցրցնած՝ կը թափէ ջուրերու մութ
կապոյտ խորութիւններուն մէջ , օրօրուած
ալիքներու հեշտապարար Ենէականներէն , ու
րոնց գգուող նազարաքները կը կազմեն՝ շո-
գեհաւին վիթխարի մեքենաներուն միօրի-
նակ ու լուրջ խորութեանքերը , մինչ հոլը՝ ուլ-
կիանոսներու դարաւոր սիրերգները և մա-
միկի հին հին հէքեաթները կը փոխադրէ՝ պա-
րաններու և չուաններու մէջէն , ծերուկ
նաւաստիի մը անհոգութիւնովը կարծես . . . :

Ի՛նչ հաճոյք , երբ ցորեկները կամրջակին
վրայ պտտելով՝ կը դիտես ծովուն կապոյտ
անհունութիւնը՝ անհետացած հորիզոնին ա-
նորոշ ու անթափանչ անսահմանութեանը
մէջ , մինչ ատեն ատեն նոր նոր տեղեր ,
նոր նոր գիւղեր , նոր նոր գիւղականքեր ու
նոր նոր քաղաքներ կը գրաւեն ամբողջ ուշք ,
և հսկայ շոգեհաւը իր հաստ չլթաններուն
անվերջ կըճթ կըճթներովը կանգ կ'առնէ՝
քեզի բոլորովին անծանօթ նաւահանգիստի
մը առաջը , երբ արեւը իր ամբողջ ճառա-
գայթեմներովը կ'ողողէ տուններուն տանիքները :

Ահա ասոնք են բոլոր այն անփոփոխ գլի-
շները , որոնք կը գործածուին ճամբորդու-
թեանց հրապոյրները ի վեր առնելու համար ,
և զորս կարգացող միամիտ և բանաստեղծ
ընթերցողը իր հոգիին ամբողջ թափովը կը
բողձայ այն հրապոյրները վայելի :

Սակայն , մէյ մըն ալ ինծի հարցուցէ՛ք !
Խնդրեմ , մի՛ ջանաք պարապ տեղ հաս-
կըցնել ինծի ճամբորդութեանց անուշու-
թիւնները , որովհետեւ ըստ իմ խոնարս կար-
ծիքներուս վերջին տպագրութեանը (յաւել-
եալ եւ քարեփոխեալ) , ճամբորդութիւն ըս-
ուած բանը , ա՛յնչափ բանաստեղծական է ,
որչափ մեծ-մայրիկիս Փօթօղ :

Եթէ այս բաները ճամբորդութեանէս ա-
ռաջ ըսած ըլլայի , թերեւս կ'ըլլէի , բայց
հիմա Սեւ ծովը տեսնելէս ետքը չէ , սիրե-
լիս , ո՛չ թէ կըլլել , ա՛լ կարկարա անգամ
չեմ ընէր :

Վարպետ-տուտու գացած ատենս՝ Սեւ
ծովին անունը լսած ու կարգացած էի , սա-
կայն ասիկա լոկ վարպետ-տուտուի Սեւ ծովն
էր , և բոլորովին հեռու այս Սեւ ծովէն ,
զոր վայելիցի հինգ օր և հինգ գիշեր , գը-
լուխս՝ կաթնասներու չափ ուռած , աչքերս

չմորած և ամբողջ տակաւ մը գինիի մէջ պանեօ բրած գինովի մը պէս տապալտեցելով հոսկէ հոն :

Եթէ հարցնելու ըլլաք թէ՛ Սեւ ծովը սեւ էր թէ՛ ճերմակ , խօսքը մէջէնիս , չպիտի կրնամ որոշ ու վստահ պատասխան մը տալ , որովհետեւ հինգ օրուան ճամբորդութեանս մէջ լնաւ ժամանակ չունեցայ անգամ մը իսկ երեսը նայելու Սեւ ծովին , ա՛յնչափ գամուած էի չոգեհաւի բարձրաբերձ նեղճակ անկողնիս մէջ , որուն մէջ անկարելի է դառնալ , եթէ չես փափաքիր յանկարծ ինքզինքդ մէկուկէս մեղր վար գտնել :

Տասը-տասներկու ընկերներ էինք՝ բոլորուած տաքուկ գամառային ճարճատան վառարանին շուրջը , ծեր ու երիտասարդ դերասաններու զուգորթախոհ հաւաքոյթ մը , ուր զուարճալի խօսակցութիւններ կը ըլլային համեմուած ջարդիական ու կէս-գրական սրամտութիւններով , մինչ բամբասանքը կը կաղմէր իր նախագահի աթոռը , իբր՝ ատենադպիր ունենալով . . . տիկին շատախօսութիւնը :

Ամբողջ օր մը մնացինք Պէօլիւքտէրէի բացերը , որովհետեւ նեղուցէն դուրս անցնելու կը գոռային իրենց ամբողջ կատաղութիւնովը , և մեր նաւապետը կը վախճար դուրս ելլել այս օդին , որովհետեւ դեռ առջի շաբթուն , նոյն ծովին մէջ , իր աչքին առջեւ խրած ու ընկղմած նաւերուն ողորմելի վիճակը անջինջ կը մնար իր ծովէ անվախ մարդու յիշատակներուն խորը :

Եթէ ասիկա յունիսին կամ յուլիսին ըլլար bien merci ! սակայն , յունուար ամսուան ճիշդ մէջտեղը , ձիւնին , փութին ու անձրեւին , մինչև Պէօլիւքտէրէ օդափոխութեան երթալ և հոն , ծովու վրայ , քսանը չորս ժամ Պէօլիւքտէրէի օդ չնշել . չէ՛ , ասիկա քաջուելիք բան չէր :

Ու քրքիչները , քահնանքները կը շարունակէին անհոգ , անհանգիստ ընելով գամարային միւս ճամբորդները :

Մինչև հոս ի՛նչ որ է :

Բայց , հազիւ չոգեհաւը ճամբայ կ'ելլէ դէպ ի նեղուցէն դուրս , ակամայ լրջութիւն մը կը տիրէ ամէնուն վրայ :

Միծաղները կը մարեն իրենց արձագանգները , չրթունքներու ժպիտները կը տխրին , դէմքերը կը տժգունին , աչքերը կը խռոջանան ու սեւ չրջանակներով կը բոլորուին . և ահա՛ ամէն մարդ իր չխմած գինովի քայլերը կ'ուղղէ դէպ ի անկողին , ստամոքսները ծովուն դէմքը , բողոքեն , կը սրտմորտին և իրենց սրտմտութիւնը չյայտնելու համար ինքզինքնին կը զսպեն , սակայն

ի զո՛ւր . — Էօ , Էօ , Էօ , ամէն կողմէ՛ Էօ , ասդին կը դառնաս Էօ , անդին կը դառնաս Էօ : Եթէ Էօ ընելու միտք ալ չունենաս , ամէն կողմէ՛ Էօ , Էօ լսելով , կը նախանձիս , և դուն ալ կը սկսիս՝ Էօ , Էօ :

Կերակուրներուն երեսը ո՞վ կը նայի , և մտածել որքան մարդիկ , որոնք իրենց չոգեհաւի տոմսակը կերակուրին հետ մէկտեղ կ'առնեն և բերանին պատառ մը բան չղրած չոգեհաւէն դուրս կ'ելլեն :

Մենէ՛ ոմանք , ի տես արիւնագէղ պլւթթիքներու , խորոված հաւերու , չոգեփոփուր ապուրներու և սալցալը երկայնախմորակուրածակերու (աշխարհաբարբ մաքարոնի) կը պոռա՛ պաղատողական յուզիչ շեշտերով :

— Ա՛հ , թո՛ղ տուէք որ ուտեմ անկէ ետքը . . . փսխեմ :

Սակայն չոգեհաւին նաւապետները յօժարակամ կը զրկեն մեզի այս ճանձրոյթէն , և իրենք , անհոգ ու անփոյթ , ճաշասեղանին շուրջը բոլորուած , քիթերուն տակը մեր ամենուն փայն ալ ի հաշիւ մեզի կը լափեն՝ սեւ ու ճերմակ գինիներով ոռոգելով իրենց ստամոքսները , մինչ մենք ակռաներս կը կճրտենք՝ հազար ու մէկ անէժժը մէկ փարայի ուղղելով անոնց հասցէին :

Ու չոգեհաւը կը տատանի՛ , կը տատանի՛ , օրերով ու գիշերներով կը տատանի՛ , օրօրոցի մանկիկներու պէս երեբցնելով մեզ մեր անկողիններուն մէջ :

— Կռնակի վրայ պառկէ՛ կ'ըսեն , չես աւրուիր :

Կռնակի վրայ կը պառկիմ և շատ չանցած՝ Էօ :

— Երեսի վրայ պառկէ՛ , կը խրատեն . . . երեսի վրայ կը պառկիմ , ու նորէն՝ Էօ :

— Մովուն նայէ՛ , կը հրամայեն : Աչքերս անքիթի ծովուն կը յառեմ , այլ ի զո՛ւր :

(Ու զարմանալին հոն է որ ինծի այս խրատները տուողներն ալ՝ իրենց խրատը հազիւ տուած՝ պարտք կը համարին քանի մը հեղ դէպ ի յաւապօն ծախ) :

Հազիւ կը փորձես անկողնէդ դուրս ելլելով և décrivant des ovales քանի մը քալ առնել սալօնին մէջ և ահա՛ փռուած քանի մը անգամներ չոգեհաւին տախտակամած կը համբուրես , մինչ գամառային սոլասաւորուն վրայ գամուած է , պիլարսոսի գնդակներու պէս , գետինները գլտորելդ տեսնելով՝ կը մարմրի խնդալէն :

Ու այսպէս , galopant-galopant ու cahincaha , առտու մըն ալ կը հասնինք Սամոսի առջև , վերջապէս :

(Պիսի շարունակուի)

ԵՐ. ԹՕԼԱՅԵԱՆ

ՊԱՏԱՍԽԱՆ ՄԸ

Դիպուածով ձեռքս անցաւ Բիւրակնի վերջին թիւը (34) ուր Ենովք Արմէն իմ գերական անունս ու Վերջին մէկ յօդուածս (Ժայռի ջուրը)՝ իրեն նիւթ ըրած, ուսումնասիրութիւն մը ընել փորձած է :

Այս անգամ բազմաթիւ լինձակեր է, թէեւ ես ա՛յնքան հեռու էի Բիւրակնի վրայ մտածելէ որքան Ենովք Արմէն իմ վրաս չմտածելէ : Ուրիշ կերպ խօսելով, Բիւրակնի առաձգական աւազանն է որ մինչև ինծի երկնաշէջ սրտակեղեք ճիգեր է ըրեր յորմէ հետէ Եղիան ալ չի գրեր ու անոր գրածին նման յօդուածներ չե՛ն հրատարակուիր հոն) : — ու ինձմէ արտագրուած յօդուածը սեպէի (seiche, միւրեքքէպ պալըլը) մը պէս մէ՛կէն գոյն տուեր է այդ խեղճ վախ աւազանին տղամու լճացած անգոյն ջուրին որ աշխարհի ո՛չ մէկ բան կրնայ իր մէջ անդրադարձնել :

Իր յօդուածը, աւելորդ կրկնաշատ պատուելիական երկարաբանութեամբ մը, ծայրէ ի ծայր կը խօսի կարծեցեալ մթութեան մը վրայ զոր ունին եղեր իմ յօդուածներս և մանաւանդ վերոյիշեալ յօդուածս, թէեւ ինքը, այդ մթութենէն զատ, « իմ վրաս ու չադրութիւն հրաւիրող ուրիշ մէկէ աւելի պատճառներ » ալ կը գտնէ զորս չըսեր, զորս չի կրնար ըսել, նման երկամեայ տղեկի մը որ իր մօր մեղմանուչ օրրերգին տեղ յանկարծ նիակարայի ջրվէժին ահագին մըռնչիւնն ունենայ իրեն՝ իբր օրրերգ :

Նա՛խ, թուե՛մ իր յօդուածին մէկէ աւելի հակասութիւնները ու դուք հետեւցողէ՛ք յօդուածին ու յօդուածագրին իսկութիւնը : —

— Զիս կարգացողները ու նոյն իսկ — ինչ պատիւ — « վաղուան գրողները » ինչպէ՞ս կրնան « մեատուիլ » ինձմէ, քանի որ « ո՛չ ոք ուզած է գիտնալ թէ ինչ տեսակ գրող մըն եմ » կամ քանի որ « կարելի չէ՛ բան մը հասկնալ գրածէս » :

— « Ո՛չ ոք յատուկ խառնուածքով մը օժտուած », « իրապէ՛ս եզական գրականու-

թիւն մը ընող » մէկը (միշտ ինծի համար կ'ըսէ) ինչպէս հաշտեցնել « նախորդ սերունդի գրողներէն մէկ քանին » և « ուրիշ նորագոյններու » արտագրութիւններէն կըրուած « խիստ ազդեցութեան » հետ (Որո՞նք են արդեօք այս ակնարկուած ազդակները) :

— « Ընթերցողներու մտաւոր կարողութեան տկարութեանը համար չէ՛ որ անհասկնալի է » որ և է գրութիւնս, կը գրէ, « այլ որովհետեւ իրապէս (en soi-même ?) անհասկնալի է » : Ու կը շարունակէ՛ իր խօսքը սապէս. « Եւ ամէն մարդ օժտուած չէ՛ Գօլանճեանի իմացական առանձնայատկութիւնով » : Այս վերջին եզրը բնախօսօրէն կը ջնջէ առջի եզրը : Բայց Ենովք Արմէնին հոգն է, « հոն ուր գաղափարները կը լուեն, հոն բառ մը կը տնկուի » կ'ըսէ Կէօթէ : « Իրապէս (բացարձակապէս) անհասկնալի՛ն՝ ո՛չ մէկ իմացական առանձնայատկութիւն » ունենալ կ'ենթադրէ : Այսպէս է որ մարդկային մտքին համար բացարձակապէս անհասկնալի եղող Անէութեան ո՛չ մէկ « իմացական առանձնայատկութիւն », ո՛չ մէկ միտք կ'ընծայենք, մեր հոգիին նմանող ո՛չ մէկ գիծ գտնելով այդ գաղափարին մէջ, ու անոր համար կը ցաւինք :

Բայց գլխաւոր պատկառելի հակասութիւնը հետեւեալն է .

— Իմ արտագրութիւններս հրատարակողներն իսկ « աննպաստ յանկերգ » մը ունին նոյն այդ արտագրութեանցս դէմ, կը գրէ, և կ'ըսէ թէ « սխալ է աւիկա » (այսինքն նկարագրի բացակայութիւն է, ապեւրախտի չարամտութիւն, կամ, շատ աւելի ճիշդ ըսել, չարաչար կրաւորականութիւն՝ passivisme) : Մինչդեռ Բիւրակն ալ հրատարակած է ինձմէ մէկէ աւելի յօդուածներ... ընդ հովանաւորութեամբ Ենովք Արմէնի :

Այս հակասութիւնները քնական է որ ըլլան միջատիպարէն ալ վար փղշտացի մը մէջ :

Գալով իր արտագրել փորձած յօդուածին մասին ըրած փակագծուած դիտողութիւններուն, ահա՛ անոնց գլխաւորները որոնք վերոյիշեալ հակասութիւններէն ալ վար են, որովհետեւ մինչ այս վերջինները անտրա-

մաքանութեան հետ կապ ունին, այդ փակագծուածները զգացումի խելճութեան հետ կապ ունին մեծ մասամբ:

— «Միակ բիծը գիւղին պայծառ խղճին» (գլխետան համար կ'ըսուի): Պ. Ենովք կը հարցնէ թէ գիւղը խղճ կ'ունենա՞յ: «Սրահին ցնծութիւնը», «քաղաքին համաճարակ»ը, դեռ թուե՞մ օրինակներ: «Գիւղին պայծառ խղճը» գիւղը կազմող բնակիչներուն ներդաշնակ գիտակցութիւնն է, պիտի ըսէր նոյն իսկ Քասիմ ա'յնքան դիւրաւ կերպով:

— Չարամտութիւն կամ պարզապէս թանձրամտութիւն կայ տէր-բայրի չփոթումով զոր չարաչար ի գործ կը դնէ Պ. Ենովք՝ սա խօսքին մէջ. «իրենց լուսթիւնը լերան հպարտութիւնն ունի ու իրենց ժպիտը ջուրին ուրախութիւնը» — հոս իրենցը «տղեկներն ու աղջնակները» կը մատնանշէ և ո'չ թէ (Պ. Ենովքի մտքին) ստուերները: Տէր-բայրի այս չփոթումով՝ չարունակողը նախադասութիւնն ալ զոհուեր է (իր մշտքին) ստուերներուն. գոնէ այս անհաւատալի էր:

— Իրագիտութեան դաս առնող երախայի մը պէս կը հարցնէ թէ «մանկութեան դարձի» («ու պատուհաններու լոյսին դառնալու») գալարուն ճիգեր ունեցող ծերունիի գլուխ» մը ինչ տեսակ երեւոյթ է արդեօք...: Օ'հ, անշուշտ ո'չ Պ. Ենովքի յօդուածներուն դառնալու անպատում ճիգի մը երեւոյթը...:

— Կը հարցնէ թէ՝ «կրօնական արտայայտութիւն ունեցող ժպիտ» կ'ըլլա՞յ, ա'յնպէս որպէս նկարագրած եմ: Այս հարցումն աւելորդ է բոլորովին:

— «Եւ արդէն ե՛րբ (գինովները) կրնային դիտել, երբ կրնային ունենալ՝ տեսնել ըստած երջանկութիւնը»: — Կը հարցնէ թէ «ունենալ տեսնելը ո՞րն է»: Կամ ա'յն է որ Պ. Ենովք յայտնի կը կատակէ, չհասկընալ կը զարնէ կամ, աւելի՛ ճիշդ, թանձրամտութիւն ունի:

Կ'ամէնամ կոր նոյն իսկ Ֆրանսերէնի թարգմանել անհարկուած նախադասութիւնը. — «quand (les ivrognes) pouvaient-ils

avoir (posséder) le bonheur qu'on appelle voir?» Յայտնի է թէ հոս «կրնային»ը «ունենալ»ին կ'երթայ, հետեւապէս «տեսնել»ը «ունենալ»ին չ'երթար եթէ, սակայն, Պ. Ենովք կ'երթայ թանձրամտութեան:

Միւս փակագծուած դիտողութիւնները իմ նկարագրութեանցս շուրջ կը դառնան, նրբերանգնիդ բացատրող ամէնէն անկեղծ տողերուն որոնց առջև ինքը կը շուարի կը թմրի, hébété վիճակ մը կ'առնէ, որպէս թէ ամբողջ Նիակարայի ջրվէժի մը գոյներու բլրազանութեան մէջ խելդուէր իր միտքը: Ենովք մէկը ա'յդպէս պիտի բացագանչէր բարիզեան ինքնաշարժ կառքի մը առջև, թողէ՛ք որ Պ. Ենովք Արմէն նոյն իսկ եռացող ջուրին առջև բացագանչելու՝ շուարելու երեւոյթ մը առնելու չափ կրնայ խորհիլ, այսինքն շուարիլ ու տատամսիլ, առանց գիտնալու, կամ գիտակցութիւնը ունենալու իր վիճակին:

Ասիկայ կըսեմ, և կարծեմ կրնամ հաստատել իր մէկէ աւելի ձախաւել դիտողութիւններուն առթիւ:

Իր հակասութիւններէն զատ զորս թուեցի վերը, ուրիշ մտքի տկարութիւններ ալ չե՛ն պակսիր, վասն զի ամէն տկարութիւն շատ մը տկարութիւններու բաժնուած է: Ահաւասիկ երկու օրինակ ևս, և չտապե՛նք վերջացնել յօդուածս որ երկարեցաւ: — Կ'ըսէ թէ «ես գրական մոլորանքի մը զոհն եմ, մոլորանքի մը որուն երբէ՛ք չե՛մ անդրադառնար, կամովին չե՛մ ուզեր անդրադառնալ կամ չե՛մ կրնար անդրադառնալ (*)»:

(*) Յաջորդ թուով մը պիտի հրատակուի «Իմ Դաւանանքս ու Արուեստս» խորագրով մէկ յօդուածս: Անձնական խոստովանութիւն մ'է ան որ մոլեգին անկեղծութեամբ ուր դաժան խստութեամբ կը սրբագրեմ թերութիւններս: Մտածումիս հետ՝ Մտածումին պատմութիւնն է ու հայեցողական ճգնաժամերս ինձ սորվեցուցին այս արտայայտութիւնը:

Այս երեք եզրերէն որն է արդեօք ճշմարիտը . կը տեսնէ՞ք կրիտիկոսի թափանցողութիւնը որ երեք եզրերու վրայ կը կազմայ ինչպէս փետուր մը ալիքի մը վրայ : Ասիկա յայտնապէս տկար դատողութիւն մ'է : — Այլուր (Բիւզանդիոն , թիւ 2704) , « բաւական յղկուած միաք » կը կոչէ զիս ու միանգամայն « գիտակից հաւասարակշռութիւնը չգտնող » , « Յղկուած » կը նշանակէ կիրթ , մշակուած : Մտքի մշակման գլխաւոր նպատակներէն մէկը մտքին ներդաշնակութիւնն ըլլալով , ինչպէս բաւական մշակուած՝ յղկուած միտք մը բաւական ներդաշնակ չըլլար գէթ , բնաւ ներդաշնակ չըլլար : Բայց Պ. Ենովքին հոգն է յղկուած բառը , ամէն մարդ կը տեսնէ՞ կ'զգայ իր գործածած բառերուն ոգին , եթէ ականջը կը լսէ միայն զանոնք :

Գալով այն դատողութեան թէ՛ յօդուածիս նիւթն « անհեթեթ » է , « անիրական » է , ահա՛ առանձին խնդիր մը որուն չի կրնար մերձենալ Պ. Ենովք կը կարծէ ունենալ համբաւի դիւթական բանալին որ ժանգոտած է սակայն ու չը կրնար ո'չ մէկ դուռ բանալ , ո'չ մէկ մտքի հորիզոն վերակոչել , այլ միայն անախորժ խուլ ճռնչ մը հանել : Եօդուածիս նիւթը , իմ անձեռն բղխած է , իմ տենչերէս , իմ միտումներէս : Բնութեան մէջ մէկ քանի գիծեր , այո , բաւական են այդ տենչերը խորհրդանշելու , յաւերժացնելու համար : Գրականութիւնը յաւիտենական ենթակայական Արուեստին , Հոգիին վստահ ներդաշնակ արտայայտութիւնն է միայն . Բնութիւնն հակառակ իր բոլոր վտանգներուն , իր amoralityին , պէտք է անախի ընտրութեամբ մը դիտուած ըլլայ որ խորհրդանշանէ ու յաւերժացնէ այդ ենթակայական Հոգին , անասունէն մինչեւ մարդը ձգտող այդ երկար Տառապանքը , այդ երկար Կամքը Ուժի Այս է Արուեստին յաղթանակը . Ոչինչին վրայ , լաւատեսութիւնը Պարապին առջեւ : Մնացեալը զիս չի՛ հեաաքրքրեր , վասն զի մնացեալը կը հերքէ մարդը , կը հերքէ կամքը :

ԵՊՈՒԱՐՏ ԳՕԼԱՆՃԵԱՆ

Պ Ա Ն Ր Ա

Ո՛հ , չ'եմ զիտեր , հոգիս ինչո՞ւ կը քսմի ,
Ինքնամոխիմանս միջոցին ,
Քեզմէ հեռու՝ երբ կը մընամ առանձին ,
Երբ չ'ենք նսած դեմ դեմի :

Ու կ'երազեմ այն վայրերը գեղեցիկ ,
Ուրեղ երկուսն փոխ փոխ
Պըտքեցանք երանաւէս ըղձանքով ,
Եւ ուր սերը երգեցինք :

Սիրուն պատկերդ դեմս կը ցցուի , եւ յանկարծ
Համբոյրներդ մեղրահամ ,
Ու գգուանքներդ սիրակեղ կը ներգգամ ,
Անըջանքես սրբուած :

Կ'ուզեմ դիտել պայծառ լուսինն ակնաքով ,
Թաղուիլ մէջը անայլայլ
Խո՛ր լրուութեան , երազել միտ ու խոկալ
Սիրազեղուն յոյգերով :

ԵՆՈՒ-ԳԱՐՈՒ

Օ. ՃԵՆԱԶԵԱՆ

Ս Ա Ն Թ Ի Մ Մ Ի Տ Ա Վ

ԱՌԱՆՑ ԱՆԳԱՄ ՄԸ ԱՅՑԵԼԵԼՈՒ

« ՀԷՐՃԱՅԻ » ՎԱՃԱՌԱՏՈՒՆԸ

ՄԵՄ ՇՈՒԿԱՅ, Դուրումճըլար փողոց թիւ 13

Ուր պիտի գտնէք ամէն տեսակ հագուստի ,
ճերմակեղեկի , ֆանթեզիի , աղամանդի , ժա-
մացոյցներու , շոքայներու և ամէն տեսակ
կարապիներու ճոխ միջեր մը :

ԵՒ ԳԻՏԷՔ Ի՞ՆՉ ՊՍՅՄԱՆԱԻ

Ա Պ Ա Ռ Ի Կ

Գնած ապրանքնուդ 20% կանխիկ ,
մնացեալը շաբաթական 5% զուլ վճարելով :
Կանխիկ գնողին 5% զեղչ :

Հէրճայի վաճառատունը կը փութայ ծա-
նուցանել իր բազմաթիւ յաճախորդներուն
թէ՛ մօտ ատենէն պիտի աւելցնէ տեսակը իր
ապրանքներուն , զորս պիտի հրատարակենք
յաջորդելու :

ԱՐՈՒԵՍՏԱՍԵՐԻ ՄԸ ՅՈՒԾԵՐԸ

(Շարունակութիւն)

Փիշերը հանելի յոյզերու և քաղցր սարսուռներու մէջ քնացայ : Մինչև հիմա առաջին անգամն էր որ որոշ բան մը կ'երազէր : Հոն էի , թատրոնին մէջ , ու կը դիտէի ներկայացում մը՝ որ չէր վերջանար , ականատես կ'ըլլայի՝ սրտատրոփ՝ թատերատեսներու խանդավառութեանը որ անվաճան էր ու անսահման : Այնպէս ետքը լոյսին երեւակայութիւնս ու մութին երազս կազմեց առ :

Եթէ ըսեմ թէ՛ որոշապէս կրցայ հասկընալ ու ըմբռնել թատերադը՝ զոր ներկայացուցին , ստած պիտի ըլլամ : Միայն գեղեցիկ էր ան ու մեծ . ահա՛ ինչ որ զգացի , ահա՛ ինչ որ կարող եղայ հասկնալ : Շատ անգամ բան մը գեղեցիկ կը գտնենք բայց չենք կրնար այդ գեղեցկութիւնը սահմանաւորել , ճշմարիտ մեծութիւնը , իրական գեղեցկութիւնը եթէ ո'չ անկարելի՝ գէթ դժուարին է չափել ու մեկնել , կ'զգա՞նք . ահա՛ այդքան միայն : Եւ ասկէ դուրս մանաւանդ , անբարգաւաճ ու անտեղեակ միտքիս համար խիստ բարձր էր տակաւին կարենալ վերլուծել այդ իսկական վսեմութիւնը :

Վսեմին դէմ մարդ կ'ապչի , կ'ըսեն :

Սակայն վերջապէս հարկ էր որ հոգեկան այս նորերեւոյթ վիճակս իմացնէի անոր : Յաջորդող օրը շատ երկար ու վարժարանական ժամերը անանց կը թուէին ինծի : Իրիկուան արձակուրդին դպրոցէն ուղղակի Պերճուհիին գացի , այս առաջինն էր որ տունս չէի հանդիպէր :

Զինքը գտայ պատուհանին առջին զիս սպասողի դիրքով : Պատմեցի անոր ինչ որ տեսած էի անցնող գիշերին մէջ և ինչ որ զգացած էի ու առաջադրած : Ըսի՝ անոր թէ այսօր գիտակցութիւնը ունէի այն բնատուր յոյզերուն որոնք անարատ կուրծքիս ներքե կը դողդոջէին : Ինք զիտէր թէ ես անհանդարտ կեանք մը կը ցանկայի , գիտէր

թէ մեռելութիւն կամ միօրինակութիւն սիրող չէի , լաց ու խինդի , կոծ ու բերկրանքի , թշուառութեան ու երջանկութեան յարափոփոխ , անմիօրինակ կեանք մը կ'ըզձայի ու կ'երեւակայէի : Շատ ուրախ էի հիմա ես ու պէտք էր որ ինք ալ ինձմէ նուազ չը բերկրէր :

Խեղճ աղջիկը ձեռքերէս բռնեց ու աչեռուս մէջ տխուր նայուածք մը երկարելով ,

— Ուրեմն դերասան պիտի ըլլաս , հարցուց :

— Այո՛ , պատասխանեցի :

— Շատ պիտի տառապի՞ս :

— Այո՛ , մրմնջեցի , կ'զգամ :

— Մեղք է քեզի :

— Ինչո՞ւ :

— Որովհետեւ շատ պիտի տառապիս եղեր : Ինչո՞ւ չընտրես միջոց մը որով կարենաս երջանիկ ըլլալ :

— Անկարելի՛ է , չեմ կրնար :

— Այո՛ , հոծեց ան , ա՛յնքան տրտմութեն որ՝ գոգցես ապագայ կեանքիս բովանդակ սխրութիւնը զգացի :

Ո՛չ մէկ մտածում , ոչ մէկ դադափար եկաւ անցնիլ մտքիս մէջէն , աչերուս դէմ մթութիւն մը պարզուեցաւ , տարօրինակ մեղամաղձոտութիւն մը սրտիս խորէն ձայն տուաւ :

— Պերճուհի՛ , գոչեցի , աղուո՛րս , դո՛ւն որ զիս չես կրնար հասկնալ՝ կարելի՞ է յուսալ որ ուրիշներ պիտի կրնան հասկնալ զիս , ինձմէ երես մի՛ դարձներ , մի՛ մեղադրիր զիս , Աստուած այսպէս է տնօրիներ , Բնութեան առջեւ ամեն բան կը լռէ : Աստուած ամէն մարդ որոշ նպատակի մը համար կը նետէ աշխարհ , ամէն մարդ իր ծնունդէն դատապարտուած է ասպարէզ մը ընդգրկելու՝ մինչև մահացում և անմահացում : Ծագատագրականութեան հաւատա՛նք , սիրելի՛ս :

Ան կուլար : Եւ ես որ անոր արցունքներէն միայն կ'ազդուէի , այդ օրը երբեք չը յուզուեցայ՝ այնքան բուռն էր ու անսահման Արուեստփն սէրս :

Մինչև հիմա արցունքի դէմ անզգայութիւնս՝ անվկանդ մէկ նկարագիրս կը կազմէ :

Թողուցի այդ հէգ աղջիկը իր արցունքներուն հետ ու մեկնեցայ տունէն : Այդ պահ

միտին մէջ լուսինը առաջին անգամն էր որ կը տեսնայի . սրտէս նայեցայ : Ես ա'լ հարըստութիւն կ'ուզէի , բաղդախնդիր մըն ալ չէի . սիրուհիի ալ չէի ցանկար , ես Արուեստին բաղձանքը ունէի , ուստի սրտիս դարձուցի աչերս :

Լուսինին տղայ ցոլքերուն հետ մութը տակաւ կ'իջնար և փողոցներուն ամայութիւնը հետզհետէ աւելի յարաճուն կը դառնար : Տունս հասայ և առանձնացայ : Հիմա կը խորհէի անոր վրայ՝ զոր մինակ էի ձգած տիտ'եր ու արտատուանեղծ , ինչ կ'ընէր ան հիմա ու ինչ կը մտածէր ինծի նկատմամբ . արդեօք իրաւունք ունէր . չէ' . պիտի տառապէի , թշուառ պիտի ըլլայի , այնպէս չէ' , և սակայն աւելի ես դժբաղդ , աւելի չը պիտի տառապէի երբ սրտիս պահանջումէն տարբեր ապարէզի մը հետեւէի : Ինծի տանջանք մը սահմանուած էր , կեանքս թշուառութիւնով մը պիտի հատնէր , ա'յսպէս կամ ա'յնպէս , խնդիր չէր ինծի համար , գոնէ զգացումներուն յագուրդ ու գոհացում կուտայի : Աս' ասա'նկ պիտի ըլլար , և մէկը չը պիտի կարենար համոզումս խախտել : Կամաց կամաց հարկ եղող աշխատութիւններուն պիտի ձեռնարկէի , Արուեստին մասին տեղեկութիւններ , ծանօթութիւն պիտի քաղէի . բայց ո՛ւրկէ . « այս մասին յետոյ կը խորհիմ » ըսի իւրովի : Ալ Պերճուհին ալ տեսնելու չը պիտի երթայի , ինծի պէտք եղածը թատրոնն էր , թատրոն հարկ էր տեսնայի :

(Յաջորդ թիւով)

ԱՇՈՏ ՄԱՍԹԵԱՆՅ

ՖԱՆԹՕՇՆԵՐ

Առաջնորդութեամբ Յ. ՍԸՎԱՃԵԱՆ հօգեհօր
Ի ՆՊԱՍՏ Պ. ԶԱՓՐԱՍՏՃԵԱՆԻ

Սկիւտար Իճատիէ Սէթլի զբօսարանը

10 Սեպտ. 1905 ՇԱԲԱԹ գիշեր ժամը 2 1/2 ին

Բանաձանօթ կատակերգակ Պ. Զափրաստեան , որուն կարողութիւնը տարիներէ ի վեր կը ծափահարէ Սկիւտարի թատերասէր ժողովուրդը , իր ընտանիքին և չորս անչափահաս զաւակներուն հացը գէթ ժամանակ մը ապահովելու համար կը դիմէ զինքը ճանչցողներու նիւթական աջակցութեան , յուսալով որ ասով պիտի կրնայ գոհացում տալ իր զաւակաց , որոնք իր թափուր ձեռքը կը նային :

ԹԱՓԱՌՈՒՄՆԵՐ

ՄԱՌՔՕԻՆ ՊԱՐՏԵԶԸ

Վ. ՅԱՐՈՒԹԻՆԵԱՆԵՆ ԳԱՊՏԱԿ

Սկիւտարցին ալ ունի իր Մաւքօի պարտէզը , որով կը պարծի և ուր կ'առաջնորդէ իրեն հիւրերը : Հիւրասիրութիւնը Սկիւտարցին ուն տրուած է (?) :

Կիրակիները անպատճառ , իսկ լուր օրերու իրիկունները ըստ հաճոյս՝ Սկիւտարցիք կը սիրեն երթալ գրաւել այդ ցանկապատ պարտէզին խսիր աթոռները լոկ նստելու համար :

Պարտէզին տէրը հսկայ , առողջ , երկայնահասակ անձնաւորութիւն մը , որ աւելի յարմարութիւն ունի կարծես զազանազուսպ մը ըլլալու՝ քան թէ տնօրէն մը իր վարձած պարտէզին :

Առաջին անգամ զինքը տեսնողը անպատճառ կը յիշէ չոգեկառքի լօթօթիձը , որ հեռուէն տեսնալուդ վախ , իսկ տակաւ մօտենալուն սոսկում կ'ազդէ դիտողին : Սակայն և այնպէս միւսիւ Մաւքօ չաքարէն ալ անուշ , բամպակէն ալ կակուղ է ընոյթով :

Պարտէզին ըմպելիքները և ուտելիքները այնչափ շատ և բազմատեսակ են , զորս կարելի չէ այս նեղ սիւնահիւրներուն մէջ ամփոփել , միմիայն կը գոհանանք չեչտել էն գործածուածները :

Անուշ սուրճ	20	փր.
Մէթոօ »	20	փր.
Սքէթօ »	20	փր.
Սուրճ	20	փր.
Խախվէ	20	փր.
Բաֆէ	20	փր.
Բահվէ	20	փր.
Բօֆի	20	փր.

Այնպէս որ՝ երբ մէկը ուզէ զրպանը անհանգիստ ընող քառորդը վատնել , անկարելի կըլլայ նոյն իսկ եթէ 8-9 հոգի մեծաբել ուզէ : Ու ըսել թէ Սկիւտարցին գործը չիյտէ , շատ ստակ կը վատնէ հէ' . . . :

Սկիւտար առաւելութիւն մ'ալ ունի , այն է նարտի դպրոցը . Մաւքօին պարտէզը կատարեալ , վարժարան մըն է քալլու , ըսուած

գրաստի խաղին, որուն հետեւող պիտապատկառ աշակերտաց թիւը կրկինն է երեք միացեալ վարժարանները յաճախողներուն, եւ զարմանալին սա է որ նոյն այդ վարժարաններու դաստիարակարտ դասախօսները հոս ալ պաշտօն ունին, professor de tric-trac անունով, բոլորն ալ վկայեալ . . . ոչ Ոձմ. Խորհուրդէն սակայն :

* * *

Սկիւտարցի տիկինը այնքան կը սիրէ Մառքօն (կրբ Մառքօ կըսենք ի.մա պարտէզը) որ եթէ ձեռքէն գայ ցերեկին ամուսնոյն ձերմակեղէններու կարկտուքը կուղէ հոտ, այդ գեղեցիկ ծառաստանը ընել, շնորհիւ էթիքէթի պակասին, ուրկէ կը ստակայ ան :

Սկիւտարցի կինը Մառքօն կը սիրէ մէկ քանի արդար և համոզուելիք պատճառներով :

1. Դրամի խնայողութեան համար :
2. Օղի և ուրիշ ըմպելիներ չի գտնուելուն համար :
3. Թուրքի մուրիկ կարենալ նստելուն համար :

Եւ պէտք է ըսել որ տան տիկինի մը համար այս երեք առաւելութիւնները կը բաւեն ի սէր քաղին, ամուսնոյն և անձին :

Շարժումն մէջ ո՛ր և է մէկ օր երբ դիպումածաւ տարբեր ժամերու մէջ հանդիպիք տարբեր յաճախողներու, ինչպէս, առաւօտեան ժամերուն մինչև կէս օր՝ հոտ պիտի գտնէք Մառքօն, իր աւանդական կլկլակին ծխամորճը (չիտակ բաժն է Թէոդի'կ . . .) ձեռքը, մինչ անդին երկու սպասաւորներ ամանները մաքրելով կզբաղին, քիչ մը անդին երկու տարեց ու կորագամակ ծերուկներ քիթ քիթի, որոնք հողին նայելով իրենց ձեռքի զէթինի կուտէ համրիչները կը քաշեն, և որոնց չափահաս զաւակները չուկան կաշխատին և տունը կը նային : Եւ երբեմն երկու տիկիններ, որոնք եկած են հոտ իրենց կէսրոջ միւսը ուտելու Մառքօի մարսողական խախլէով :

Կէս օրին յաճախողները կը փոխուին :

Մէկ երկու հայագործ, որոնք մատիտ ի ձեռին, իրենց անգանձելի հաշիւները կը պրպտեն, անուշ և պատուաբեր(?) ածականներ

ներ շռայլելով այն յաճախողներուն անուններուն՝ որոնց դէմը 670—840 թուանշանները ամիսներու և թերեւս տարիներու շրջանին մէջ անընթեռնի դարցած են ալ, ազտոտ, մուրտ :

Քիչ մը անդին մէկ քանի զպրոցական շրջանաւարտներ, որոնք ցերեկին հօբերնուն հացովը կշտացած եկած են հոտ, օրուան այդ տաղտկալի ժամերը անցնելու՝ շնորհիւ նարտին, մինչ իրենց հայրը կաշխատի անդին :

Մէկ երկու խանութպաններ, որոնց գործը երեկոյեան ժամը տաննէն վերջ կսկսի, — անշուշտ հասկցաք գինեպանները — անոնք ալ իրենց կարգին կը շաղակրատեն, առջի երեկոյեան անխելք յաճախողներուն վրայ, և կը խորհին մեզի ըսուած անբաժան և մղիշ տարբին տեսակը ազնուացնել, սովորած փորկիներու հաճելի երեւալէ աւելի, սնտուկը մտնալիք հասոյթը կրկնապատկելու մտք :

Յերեկուան ժամերուն կիները իրենց բացակայութեամբ կը փայլին, հոտ ու ոչ մէկ բէշաւոր կրնաս տեսնել :

Մ. . . խնդիրը կը տարբերի, ինչպէս նաեւ յաճախողներու տեսակն ու որակը, կրբ օրը իրիկուն կըլլայ :

Երեկոյները հոս Մառքօի պարտէզը կարծես էրիկ-կնկան ռանստիկութիւնն է, տիկինները քիչ մը կանուխ, իսկ այրերը չուգեմաւէն ելլալուն շունչերնին հոս կառնեն, ինչպէս նաեւ օրիորդները չի մոռնանք յիշելու : Եւ ներկաներուն մէջ կը նշմարուին ի մէջ այլոց, թաղին վարժապետները, որոնք կուգան « ծօ սուս եղէ՛ք » « ծօ՛ դասի ելիր » ներու յոգնութիւնը թոթափել այդ զով ծառաստանը :

Չեմ կրնար ըսել շրջախտի, սակայն աչքի զարնելիք թուալէթ մը չես կրնար գտնել հոս, բոլորն ալ իրենց տանը պարտէզը ելլալու պէս թեթեւ՝ կուգան կը բազմին, և մինակ գլխարկներն են որոնք փողոցի ձև կուտան հագուստներու :

Հիմա պատմեմ թէ ինչպէս կըլլայ մուտքը, և ինչ կը խօսին նստողները ի տես նորեկ ընտանիքի մը :

Վարէն զառիվերը կը մագլցին մէկ քանի կիներ և օրիորդներ, ու կը հասնին պար-

տէղին դուռը, ներս մտնալուն նախ կէս ակնարկ մը կանցնեն ընդհանուրին վրայէն, ու քալուածքնին փոխելով շիտակ պարապ սեղանի մը շուրջը կը բոլորուին, և անգամ մը որ նստին ալ դիտակի պէս անոր ասոր կը նային, կը դիտեն ու կսկսին Սկիւտարցիի յատուկ ծամծմուքը (բամբասանքին հոմանիշն է)։ Մինչ իրենցմէ առաջ նստողները բոլորը մէկ աչքով վրանին կը յարձակին, ինչպէս նաև խօսքով։

— Բա ատ ինտոր է աւրուէր . . .

— Կէսուրոջը հետ աւտուրնէ մինչօք իրենցուն խըռ խըռ ունին, ինչ պիտի ըլլայ . . .

— Բա սա հագածը անցած տարուան դուրսի ֆիստանը չէ . . .

— Ատ ինտոր ալ քսուեր է . . . ընհ . . .

— Բոլինը ազապ քուրն է, ինծի կուգայ քի . . .

— Իրէք հարուր օսկի կուտան կոր մամա խաթը հարցունող չիդայ . . .

— Տնաչէն կնիկ, պարէ, սօն ամիսներն ես նէ, դուրս միլլար . . .

— Բէշէրը նայէ, սօխախ սիւբիւրկէսիի պէս կաւէ կոր կէտինը . . .

Այս խօսակցութիւնները կընդմիջուին ֆընտրիսի, ճէվիզ իչիի, և չէյիրաէկի ուտելաբանութեամբ։

Վայ այն կնկանը որ բազմութիւնը լեցուած ատենը, այսինքն քիչ մը ուշ ներս կը մտնէ դուռնէն, ալ ծուրկը կը հանեն, առանց անդրադառնալու իրենց ծուռ գըլխարկին, տեմօտե քօսթիւմին։

Կարգ մը յաճախորդներ ալ կան, որոնք ան աս դիտելու համար քսան փարան աչքէ կը հանեն, ամուրի դասակարգը ըսել կուզեմ։ Ասոնք ընդհանրապէս զոյգ կամ երեք չորս հոգի մէկ կը նստին նարտի մը առջև, և այդ պատրուակին տակ անոր ասոր ընտանիքը դիտելով կզբաղին։

— Տիւշէլ խաղայ . . .

— Կեցիր ճանրմ երեկ իրիկուանը եկաւ նորէն . . .

— Պէ ախպար օյինըդ նայէ . . .

— Կը նայիմ կոր իշտէ բէմպէ է հագեր . . .

— Էօֆ . . .

* * *

Ահա Սկիւտարցիին երեսը ճերմկցնող ծառատեքը, որ այս տարի չեմ գիտեր ինչ միւսմ մը առաւ, այնպէս որ, եթէ այսպէս ողեւորութիւնը շարունակուի միւսիւ Մառքօ անշուշտ շիտակ ճամբան պիտի սկսի իր իտէալ աքառքըմանը տնկել, զոր սակայն կը ցաւիմ ըսել թէ չպիտի կրնայ աւարտել, քանի որ Սկիւտարցիին բնոյթն է ցուցնել և քաշուիլ։

Իմ կողմէս բան մը պիտի խնդրեմ միւսիւ Մառքօէն, յանուն տիկիներու և օրիորդներու, այն է՝ թուալէթի յատուկ սենեակ մը հաստատել պարտէղին մէկ անկիւնը, ուր յաճախորդուհիք կարենան իրենց հովէն աւրուած գլխարկները շտկել, բուտաւան թաղեցունել։

Այս շարթու թեթեւ անցանք հէ՛ . . .

Վ. ՓԱՓԱՋԵԱՆ



Ինչ որ ունեւ՝ վեհ, նուիրական Բաւերու մթերք, իմ սրբիս խուրհիմ Զօհեցի անուանդ . գուրեղ հայրական՝ Սպասելով որ մեղքերս ներեն։

Զգշում յայնցեցի, խոսովանելով՝ Կիրեբուս յսխուռն գործեր բոլոր . Որ չեղայ զսպող ու կոյր սերերով, Պղծեցի՜ բուկին պարգե՛ւդ փառաւոր։

Բայց ասոց համար, մարդոյմ հեռի Ապոխարեցի, եղգմէ խնդրելով՝ Ներում մը լեցուն՝ սերերով բարի . Որ հրեուէ հոգիս ըլլայ անվրդով։

Ա՛րդ, կը յապաղի ներո՛ւմդ մեծ Ասուած, Ներումդ սխոյ անհուն գործեան, Եթէ չ'ես ուզեր ներել ո՛վ գրա՛ծ, Ըսե որ մեղքերս քաւեմ յաւիտեան։

ՍՏԵՓԱՆ ԽԱՉԱՌԻՆԻ



[10]

ՀԱՄԱՐՈՐԴՈՒԹԻՒՆ

ԼՈՒԻՏԱՔՕԼԻՕ

ԿԱՊԻԿՆԵՐՈՒ ԱՇԽԱՐՀԻՆ ՄԷՁ

ՈՐՍԻ ԵՐԿԻՐԸ

Որսի վայրը կ'առաջանայինք :

Յանկարծ դադարեցաւ կանոնաւոր տընկուած բուսականութիւնը : Գետինը քանի մը հարիւր մէթր ծածկուած էր պղպիղի տունկերով, կակաչներով, մացառներով և ձկենիներով : Բանի մը վայրկեան տեղեւուտներու թանձր կամուրջի մը տակէն կը քալէինք, ուր լեցուն թութակներ կային որոնք պոռչտալով կը փախչէին մեզի տեսնելով, մինչ երգեցիկ թռչունները, սարսափահար լեզուներն բռնուած կը խուսափէին մացառներուն տակ : Մերթ ընդ մերթ երկայնագի դեղափետուր մեծ թութակներ, կանանչ և կարմիր, ծուրթէն կը թռչտէին ոստէ մը ուրիշ ոստ մը, ագռաւի պէս կըռկըւալով : Սարեակներ, անոնցմէ որոնց ծանրութեամբը ոսկի կուտան մեր պէրասէրները իրենց գլուխը յարդարելու համար. կը թռչտէին քանի մը քալ անդին մինչ, իրենց յատկանշական տխուր և մելամաղձոտ սուլիւնովը :

Բուսական ինչ հարստութիւն : Ամէն կողմ, չունջդ, քանի մը հարիւր մէթր քառակուսիի մէջ սեղմուած, մթնոլորտը լեցուն էր հասարակածային ծաղիկներու հրաշալի և եզակի իսկութիւններով ու բոյրերով : Որսի տարփանքն կարծես մարեցաւ, ծրագիրներս խանգարեցան, այս գիւթական վայրը ըմբռնելու, վայելելու համար : Խոտեղէններու իմ հաւաքածոս ինչ անըսգիւտ, ալլազան տարրերով պիտի հարստանար : Բայց ես փամփուշտով և հրացանով մեկնած էի, պէտք էի մէկ կողմ դնել բուսաբանական գործիքները, պէտք չէր որ տարբեր ուղղութիւն մը տայի իմ ճամբորդութեանս :

Մինչև իրիկուն կտրեցինք անցանք անտառակներու և մշակութեան դաշտերու

յաջորդական շարք մը, կտրատուած մերթ ընդ մերթ փոքր գիւղերով : Այս տեղերու գիւղապետներէն ոմանք մինչ անցքի տուրք մը առնել ուղեցին, բայց Նօթուէ որ իր դիրքին պատճառաւ արհամարոտ վերաբերում մը ունէր այս խեղճ բնիկներուն հանդէպ, պատասխանեց իրենց թէ, եթէ պընդեն, սպիտակամորթը իրենց նուէր պիտի ընէ գնտակ մը՝ իրենց գլխուն մխելով զայն : Բայց այս յայտարարութիւնը արգելք չեղաւ յետոյ անոնց իւրաքանչիւրին տալու անարժէք նուէր մը, զիս սիրելի ընծայելու համար անոնց :

Այդ օրն ալ պառկեցանք այդ գիւղերէն մէկուն մէջ : Յոգնած արդէն նախորդ իրիկունէն և 14 ժամ քալելէ, վերմակին տակ քաշուեցայ և անմիջապէս քնացայ :

Հետեւեալ օրը մոտանք անտառին մէջ : Այդ վայրկեանէն սկսեալ պէտք էր արթուն աչք և պատրաստ ձեռք ունենալ, որովհետեւ առաջնորդիս խօսքին նայելով, կրնայինք հանդիպիլ վազրի մը, յովազի մը կամ կորիլի մը :

Բան մը չպատահեցաւ սակայն, և առանց հանդիպումի, մայրամուտէն քիչ մը առաջ Բանուին գիւղը հասանք, ուր կը բռնակէր Նօթուէ : Անոր վերադարձը, ինծի՝ սպիտակամորթի մը հետ, զարմանք առաջ բերաւ և բոլոր գիւղացիք խմբուեցան տընակին շուրջը ուր իջեւանած էինք : Երբ դուրս ելայ, երթալ իմ մեծարանքներս յայտնելու համար գիւղապետին, այդ ամբոխը հետեւեցաւ ինծի, բայց առանց չափազանց հետաքրքրութեան : Քսանեակ մը տարիէ ի վեր այս մարդիկը չատ մը առիթներ ունեցած էին Եւրոպացիներ տեսնելու, որով պատճառ մը չունէին այնչափ իրար անցնելու :

ԱՐՏԱԿԱՐԳ ՈՐՍԸ

Գիւղապետը զոր Նօթուէ ինծի ներկայացուց, Մյանկա անունով, սեղմեց ձեռքս Եւրոպական ձեռով, և անմիջապէս հարցուց թէ իրեն ընելիք նուէր մը չունի՞մ, ակնհարե նշան մը թէ քաղաքակրթութիւնը անցած է հոնկից: Իրեն տուի Լիեթի հրազէն մը տուփ մը, վառօդ և փամփուշտներ: Գոհ երեւցաւ և իմանալով որ կորիւ որսալու համար եկած եմ, յայտարարեց որ հետեւեալ օրը անոնցմէ հատ մը որսալ պիտի տայ ինծի:

Այս արտակարգ որսին իրադարձութիւնները դեռ թարմ են յիշողութեանս մէջ: Գիւղապետ Մյանկայի տուած խօսքին համաձայն, մեր առաջին որսը տեղի ունեցաւ յաջորդ օրը:

Արշալոյսին, գիւղապետը լուր դրկած էր ինծի իր հիւղը երթալու, ուր ինծի կ'սպասէր տասնեակ մը պատերազմիկներով, պատրաստ մեկնելու: Ասոնցմէ իւրաքանչիւրը զինուած էր հին հրացաններով, որոնք Եւրոպական վաղեմի ռազմական գործիքներու մնացորդներն էին Կուրնիոյ ծոցին եզերքներուն վրայ: Այս պատերազմիկները, կը կրէին նաեւ երկար նիզակներ, փիղի մորթէ վահան մը, կաշի գոտիով մը կռնակին վրայ հաստատուած և տապար մը մէջ քերնուն անցուած: Այս վիճակին մէջ առնոք աւելի պատերազմի երթալու երկնոյթ մը ունէին, քան վայրի կենդանիի մը հետապնդութեան:

Մեկնելէ առաջ գիւղապետը ինծի սեղանի մը հրաւիրեց, որուն ճաշացուցակն էր կապիկ մը, քանի մը խորոված հաւ և մոխիրի տակ խարկուած պանաններ:

Կապիկը ճաշակիս քիչ կուգար, քիչ մը հաւէն առի և քանի մը պանան իսկ Բանու ինները մնացածը մէկ վայրկեանի մէջ պատռեցին:

Ճաշէն ետք սկսանք առաջանալ գլխաւորութեամբ գիւղապետին և Նոթուէի որ իրեններուն քով մեծ շարքանք կը վայելէր:

Գիւղը հաստատուած էր առջի իրիկուռսնէ նշմարած բլուրներուս առաջին զառիթափին վրայ: Անմիջապէս մտանք բաւական նեղ տեսակ մը ձոր, որուն հողը կը

բարձրանար մացառապատ երկու կողերու միջև: Խորէն կը հոսէր առուակ մը որ բարձրադիր տեղերէ կուգար:

Մյանկա որ իմ մօտէս կը քալէր, առաջնորդիս միջոցաւ ինծի ըսաւ թէ երկու ժամ չտեւած կորիւներու պիտի հանդիպինք: Յայտնեց թէ այս ձորէն մեկնած չէր առանց մէկ կամ երկու կորիւ սպաննելու:

— Այս տեղերը շատ կը սիրեն անոնք, ըսաւ, որովհետեւ հոն կը հանդիպին առատօրէն տունկերու և պտուղներու որոնցմէ կ'ախորժին: Անթափանցելի փոսեր և խոռոչներ թոյլ կուտան որ այդ գաղանները պահեն իրենց պղտիկները ուրիշի աչքերէն և գետակի ջուր ալ ունին տրամադրութեան տակ, իրենց ծարաւը անցընելու համար:

Այս վայրկեանս սե փառաւոր սկիւռ մը նշմարեցի, հրացանս ուսէս վար առի: Այդ կենդանին շատ ազնոր նմոյշ մըն էր պահելու համար և շատ հազուադէպ Եւրոպայի հաւաքածոներուն մէջ: Բայց Բէնուիններու պետը անմիջապէս բռնեց հրացանս,

— Մի պարպեր, ըսաւ ան ինծի, ամենափոքր աղմուկէ մը կորիւները պիտի հասկընան մեր ներկայութիւնը և պիտի ելլեն անանկ բարձունքներ, որով գործը խիստ վրտանգաւոր հանգամանք մը կ'առնէ:

Դիտողութիւնը ճիշդ էր: Երբ մարդ մեծ գաղաններ որսալու կ'ելլէ, պէտք է մէկ կողմ ձգէ աննշան որսերը: Ինչ որ ալ ըլլայ ձեռք ձգուելիքը, նոյն նախազգուշութեան պէտք է հետեւիլ կորիւին համար, որ անտառի իր միւս եղբայրակիցներէն շատ աւելի բարձր զօրութեան կը միացնէ նաեւ նոյնքան մեծ նենգամտութեան մը և հնարագիտութիւն մը:

Պատերազմիկներու փոքր խումբը ականջնին տնկած, տչքերնին յառած գետինը, կ'առաջանային կամաց կամաց, հովահարի պէս ցրուած, պատրաստ չփախցնելու ամենափոքր շշուկ մը, և երեւան հանելու ամենէն անորոշ հետք մը որ կրնար անոնց ուշադրութիւնը հրաւիրել ներկայութեանը վրայ սոսկալի գաղանին, զոր կը հետապնդէինք իր այս սահմաններուն մէջ:

(Շարունակելի)

Արտօնատէր ԱՐՄԷՆ ԼՈՒՍԵՆԵԱՆ

Տպագրութիւն — ՃԻՀԱՆ ԳՐԱՏԱՆ

Պապ-Ալի ճառագոյսի թիւ 23

ՄԵՐ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

ՀԱՆՊԵՐՁԵԱԾՆԱՅ

Արանց, Կանանց եւ Տղայոց

ՊԱՏՐԱՍ ԵՒ ՉԱՓՈՒ ՎՐԱՅ

Գ. ԷՐՄԷՆԵԱՆ ԵՒ ԸՆԿ

Կ. Պոլիս, Սուլթան Համալ, Թօփալեան խան

Սոյն վաճառատունը, որ տարիներէ ի վեր իր ուղղութեամբ, ապրանաց առկունութեամբ և գիններու անմրցելի առժանութեամբը շահած է բոլոր իրեն գիմող յաճախորդաց վստահութիւնը, այս անգամ ձեռնուան յատուկ ընտիր հագուստներու, կանանց քէյրոյիներու և տղայոց շիք և գիմացկուն փոքրիկներու ճոխ մթերք մը պատրաստ ունի, որ ջերմապէս կը յանձնարարուի ամէն անոնց, որոնք պէտք ունին ներկայ եղանակին հագուստի և ուրիշ նմանօրինակ պիտոյից։

Սակարկութիւն չկայ, թիւը 2 զրոյ է։ Գաւառներէն յանձնարարութիւնը փութով կը կատարուին։

50—1

ՇԷՆՔԵՐՈՒ ՅԱՏՈՒԿ

ԱՄԵՐԻԿԵԱՆ ՄԱԹ ՆԵՐԿԵՐ

National wall coating & Lythite

Աժան, լուսաւոր, շուտ կը չորնան, վրայ չեն ելներ, գոյներն չեն նետեր, ջուրի և անձրեւի կը դիմանան, մուկները կը ջնջեն և չն. և չն.

Պատանայի ներկերուն իւրաքանչիւր քառ. արշընը 10—15 փարայ։

Ներախ և դուրսի ներկերուն իւրաքանչիւր քառ. արշընը 20—30 փարայ։

Տեղւոյս ամէն կողմի Պատ. յաճախորդաց դիւրութեան համար, վաճառատունս պատրաստ է սոյն գնեցող իր վրայ առնել ամէն գործ, թէ ներկն և թէ գործաւորոյցէն մէջն ըլլալով։

Թուրքիոյ միակ կեդրոնատեղին

Կ. Պոլիս, Ալաճա-Համամ, Պաղը-ճըլար թիւ 26, Գ. Աճէմեան։ — Գաւառները գործաւորներու պէտք կայ, դիւրամասշտի պայմաններով։

17—20

ՖԷՆԻՔՍ ՕԲԲԻՇԻԷՆ

ԿԱՅՍ. ԹԱԳ. ԱՌԱՆՁՆԱՇՆՈՐՀԵԱԼ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՀԻՄՆՈՒԱԾ 1860 ԻՆ Ի ՎԻԷՆԱ

ԿԵԱՆՔԻ ՃԻՌՁ

Դրամագլուխ եւ Պահեստի գումար

31,008,000 Ժրանգ

ՀԻՊԵՆԶԻ ՃԻՌՁ

Դրամագլուխ եւ Պահեստի գումար

17,000,000 Ժրանգ

ՖԷՆԻՔՍ Լաւագոյն պայմաններով կ'ապահովագրէ ամէն տեսակ չէնք, ապրանք և կարասիք։
ՖԷՆԻՔՍ Լաւագոյն պայմաններով կը կնքէ ամէն տեսակ ապահովագրութիւնը մարդկային կանքի վրայ։

ՖԷՆԻՔՍ Լաւագոյն պայմաններով կ'ապահովագրէ, ամէն տեսակ ապրանք՝ չոգենաւի եւ առաքատանաւի վրայ։

Ընկերութեանս դրամատունն է ԲԻԷՏԻ ԼԻՕՆԷ, Ընդհանուր գործակալութեան գրասենեակն է Պոլիս, Ալեանաք խան, թիւ 11—16։

Ընկերութիւնս կ'ընդունի ի գաւառս պատուաւոր ներկայացուցիչներ։

Լիազօր Երկայացուցիչ

Գ. ՖԷՐԱՏԵԱՆ

Կ. ԵԱՎՐՈՒԵԱՆ Յ. ԻՍԱԳՈՒԼԵԱՆ

ԵԱՎՐՈՒԵԱՆ ԻՍԱԳՈՒԼԵԱՆ

ՎԱՃԱՌԱՏՈՒՆ


ԸՆՏԻՐ, ԱԺԱՆ

ԹԵՅԻ ԽԱՌՆՈՒՐԴՆԵՐ

ԵՒ

ՄԻՇՏ ԱԺԱՆ ՈՒ ԹԱՐՄ ԵՆ

ՀՈՏԱՒԷՏ ԹԵՅԵՐ



Կ. Պոլիս, Պանդեֆափու, ձիալ-Պեյ խան, քիւ 10

ՀԱՅՈՒՀԵԱՅ ՎԱՐԺԱՐԱՆ

ԱՏԱՐԱԶԱՐ

Այս վարժարանը, զոր կ'վարեն ինն ան-
դամներէ բաղկացած Խնամակալութիւն մը,
եւ բնիկ ու Ամերիկացի 11 ուսուցիչներէ
կազմուած ձեռնհաս ուսուցչական խումբ
մը, հիմնական դաստիարակութիւն մը կու-
տայ բոլոր իրեն դիմող հայ աղջիկներուն:
Կ'աւանդուին բնական, իմաստասիրական,
չափական եւ այլ գիտութիւններ: Մասնաւոր
ոյժ կ'որուի հայերէն եւ անգլ. լեզուներուն:
Կ'ուսուցուին նաեւ քուրճերէն եւ Ֆրանսե-
րէն լեզուները: Վարժարանին երկու բնդա-
ռակ եւ օդաւեճ շէնքեր, ինչպէս նաեւ
խնամակալութեան երկու բժիշկ անդամներ
մեծապէս կ'ապահովեն առակերտուիներուն
առողջութիւնը: Անասօյուի Երկաթուղին,
որուն մէկ մասնագիծը մինչեւ Բաղաֆա կ'եր-
կարի, ճամբորդութիւնը խիստ դիւրին եւ
հաճելի կ'ընծայէ: Գիշերօթիկներու տարե-
թուական է 12 օսմ. ոսկի, զոր երկու մաս-
նավճարով պէժ է հասուցանել: Դասնակի
դասի համար 5 կամ 3 ոսկի կ'պահանջուի,
դասառութեան քիւին համեմատ: Երգեհոնի
դասի համար 2 1/2 ոսկի կ'պահանջուի: Վար-
ժարանին ԻԱ. տարեօրէն կ'սկսի Սեպտ. 13
(Ն. Տ.), Դե. իրիկունը: Վարժարանին նոր
յայտագիրն ուղղութեամբ ձրի կ'ղրկուի:

Աւելի տեղեկութեանց համար դիմել Մր.
Բիքի, Պայպըլ Հաուս, Կ. Պոլիս, կամ գը-
րել Տոհգ. Ս. ԷՖ. Գալպանեանի, Ասեմպետ
Խնամակալութեան, Ասաբազար: 8-7

ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ՎԱՐԺԱՐԱՆ

ՊԱՐՏԻԶԱԿ

Վարժարանիս ԻԷ. տարեօրէն կրսկսի
Սեպտեմբեր 6 ին (Ն. Տ.): Հաստատութեան
Տնօրէն Վեր. Ռ. Զեյնալքս եւ իր Տիկինը
արդէն վերադարձած են իրենց երկամեայ
բացակայութենէն, եւ յառաջիկայ տարի ու-
սուցչական խումբին վրայ պիտի աւելնան
Քանասասի մէկ նշանաւոր համալսարանէն
երկու Ամերիկացի օրհանաւարներ, որոնց
մէկը գլխաւորապէս պիտի աւանդէ առեւ-
տրական դասընթացը:

Առակերտները ընտանեկան խնամք կը վա-
րեն գիշերօթիկ ուսուցիչներուն, հաստա-
տութեան մասնաւոր բժիշկին հսկողութեան
եւ Տիկին Զեյնալքսի մայրական հոգածու-
թեան տակ:

Գիշերօթիկ առակերտներուն տարեթուական
է 16 Օսմ. ոսկի, 8 ոսկին Սեպտեմբերի սկիզ-
բը եւ մնացած 8 ոսկին Յունուարի վերջերը
վճարելի:

Վարժարանս յատուկ ուսուցիչ մը ունի
գործիական երաժշտութեան համար, այս
դասին համար տարեկան մասնաւոր վճա-
րումն է 1 1/2 ոսկի Օսմ.

Աւելի տեղեկութիւններու համար դիմել
Մր. Բիքի Պայպըլ-Հաուս, Կ. Պոլիս, կամ
Տնօրէնութեան Պարտիզակ:

Այն առակերտները որոնք Պոլսէն եկած
աւանդներն կէս զնով տոմսակ առնել կուզեն,
պէժ է որ մինչեւ Սեպտեմբեր 1, Ը. Ն. ի-
րենց անունները արձանագրել տան Գրեգոր
ԷՖ. Շահպազեանի, որ կը գտնուի ի Պայպըլ-
Հաուզ քիւ 10: 10-6